

ունէին, երբ հարցը կը դառնար անհաւատ մը դատաւար-
տելու շուրջ: Չմոռնալ, թէ ինկած էին թրքական հոծ
շրջանի մը մէջ, ուր դաշտային գեղերը, գաղթական կամ
ոչ՝ թուրքերու պատկանելնուն, պիտի խուսափուէին:
Մնալ միշտ շոգիի վրայ: Զոհել զիջանիլ մօրուքի՛ կը, ուրկէ
կրնար չար բան միայն գալ:

...Ելան վակոն: Ոստիկանները յարգանքով բարե-
ւեցին առաջնորդին բարեկամ ուսուցիչը:

...Հրաժեշտ:

...Դէպքերը քալեցին ուսուցիչին թելադրած գնաց-
քով:

Ընկեր Մաթիկ եւ ընկեր Սեդօ, բլրագագաթի գիւ-
ղին մէջ եղան շաբաթ մը: Յետոյ անցան ուրիշ մը, ուրիշ-
ներ:

Զանց կ'ընեմ ողիսականին այս մասը, ուր մեր յեղա-
փոխականը գիրքեր լեցնող առատութեամբ նշմարներ
ուներ մեր ժողովուրդէն, - բարք, նկարագիր, նոյնիսկ լե-
զու: Զեմարանի շրջան մը զուր տեղը չ'անցնիր մարդոց
գլուխէն: Զանց կ'ընեմ, վասնզի կը նմանի իր մեծ մասին
մէջ այն պատկերներուն, որոնցմէ մաս մը պատմեցի ար-
դէն: Մաթիկը ճանչցեր էր մեր ժողովուրդը, անոր ամէնէն
յետանկեալ մէկ գեղին մէջ, իրեն ջերմօրէն յանձնարար-
ւած երիտասարդ մը - որ ես էի - այդքան թեթեւութեամբ
վտանգելով ու խրիմեան վերլուծելով մարդոց առջեւ,
որոնց ազգային ընտանողութիւնը ուրիշ հորիզոն չունէր,
քան մեծկակ ծաւալով պատերը իրենց մատուռին:

Կը կեցնեմ այս յետախաղացքը:

Այժարած Ակոյի քարայրէն երբ ճամբու դրի զի-
րենք, չկրնալով համոզել վտանգին լրջութենէն, որուն
կը դիմէին, ամիս մը չանցած, անոնք մատնուած էին, ի-
րենց ժողովուրդը սիրող աղաներուն ճնշումով: Ողբեր-
գական մեծութիւնը իրենց զոհաբերումին, երբ լսելով
իրենց համար ձերբակալուածներուն տառապանքը, իջեր
էին գեղ եւ յանձնուեր թուրքերուն: Յեղափոխակա՞ն:
Դատելը ձեզմէ: Ես պատմեցի: Ու կ'երաշխաւորեմ անոնց
ողիսականին այն մասը, որուն խառնուեցայ: